



ԱՐԱՐԱՏ

ԿՐՈՆԱԿԱՆ — ԱՄԱՐԱՑԱՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ — ՊԱՑՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՒՐԱԿԱՆ — ՄԱՆԿԱՎԱՐԱԿԱՆ, ԱՋԱՍՅԻՆ ԾԽ ՊԱՏՇՈՆԱԿԱՆ.

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ · Խթ. ՏԱՐԻ ՀԵՄՄԵՐ ՀԵՄՆՎԵՐՈՒԹՅՈՒՆ ՅՈՒՆԻՍ 1896 թ.

ԿՐՈՆԱԿԱՆ — ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՎԱՐԴԱՎԱՐՈՒՄ

Ուարքի, բարուց է մեզ աստ
մծել:

Մարկ. Թ. 4.

Qեական երջանկութիւն չկայ աշխարհական կեանքի փորձը. չկայ և ոչ մի երջանկութիւն՝ ասում են մի շարք յունատես մարդիկ, դառն է և ողորմելի մարդու կեանքը, չունի իւր ամբողջընթացքում այնպիսի մի վայրկեան, որին՝ կանգ առ, կարելի լինէր ասել: Աւետարանի այն հատուածը, որ Պայծառակերպութեան տօնի հիմքն է կազմում, ներկայացնում

է մի այդպիսի վայրկեան քրիստոսի ամենամտերիմ աշակերտների կեանքի մէջ:

Զարմանալի է Պայծառակերպութեան պատմութիւնը. իւր որոշ, առանձնայատուկ տեղն ունի նա աւետարանական յայտնութեան մէջ: թէև մեր Փրկչի ամբողջ կեանքը հրաշքների մի բազմախորհուրդ հիւսուածք է, բայց այս փոքրիկ միջնադէպն առանձնապէս հրաշալի ու խորհրդաւոր բնաւորութիւն ունի. երկնքի ու երկրի մէջտեղն է կատարւում նա կարծես և խեղճ մականացուների աշքի առաջ մի ձեղք է բանում գէպի անմահերանութեան այն լուսեղէն կայանը, ուուր ննովք

և ծզիա կան ծերացեալ աղաւնակերպու Պայր-
ծառակերպութիւնն այն նշանաւոր տնօրե-
նութիւնն է, որով Փրկչի երկրաւոր կեանքը
կարելի է ասել իւր շրջանառութեան բար-
ձրագոյն կէտին է հասնում. այն բարձր սա-
րի վերայից ուր նա խօսակցութիւն ունե-
ցաւ Մովկէսի և Ծզիայի հետ մի ընդարձակ
տեսարան է բացում արդարեւ գէպի Երուսա-
ղէմ գէպի Գողգոթա. Գալիլիայի մեծ քարո-
ղին այդանդ այլ կերպ եղած, նահատակի
լուսեղէն զգեստը հագած, իջնում է այնու-
հետեւ քայլ առ քայլ մինչեւ չարչարանաց լե-
րան ստորոտը:

Այս գէպքից մի քանի օր առաջ Պետ-
րոս առաքեալը՝ խօսելով բոլոր ընկերների կող-
մից, վկայել էր համարձակ, թէ իրենց վար-
դապետը Քրիստոսն է, խոստացեալ Մէսիան:
Յաւիտենական նշանակութիւն ունեցող մի
բոլէ էր այդ, երբ աշխարհի վերայ մի մարդ
դանուեցաւ, որ առաջին անդամ ճանաչել և
կենդանի հաւատավ խօսավանել կարող էր,
թէ իւր զիմաց կանգնած ուրիշ մէկը հասա-
րակ մարդ չէ իւր նման, այլ խօսում և գոր-
ծում է այնպէս, ինչպէս ոչ ոք այս աշխար-
հի որդիներից՝ ինչպէս միայն Ծիրոջ Օծեալը,
Աստուծոյ Միածին Որդին խօսել և գործել
կարող է: Ծւ այն բոլէից դրուած էր Քրիս-
տոսի եկեղեցւոյ հիմքը. հաւատացեալների
այդ փոքրիկ խումբը պէտք է ընծայէր տասն
և երկու հիմունքներն այն մեծ հաստատու-
թեան, որ կուռած էր իւր յարկերի ներքոյ
ժողովելու զանազան ազգերի, դաստիարակե-
լու և գէպի բարձրագոյն երանաւետ կեանք ուղ-
ղերու նոցաւ: Սակայն այդ հաստատութիւնը
երկարատեւ ծանր աշխատանքով միայն կառու-
ցանել կարելի էր: Աստուծածային Անմահ Գա-
ռան և անթիւ նահատակների անարատ արիւ-
նով պէտք է շաղախ կազմուել նորա որմերի
համար: մինչդեռ Պետրոս ինչպէս անշուշտ
նաև նորա ընկերները կամենում էին անմի-
ջապէս տեսնել իրենց հաւատի արդիւնքը՝
մէկանգամից հրաշքով իրենց գաւանած Մե-
սիայի թագաւորութեան մէջ ոտք կոխել և

վայելել անվերջ նորա երանութեան բարիքնե-
րը:—Աւետարանից մեզ չէ բացատրում «
առեալ զնա մեկուսի Պետրոսի սկսաւ սաս-
անել զնա» տարօրինակ խօսքերը, որ նա
մէջ է բերում Պետրոսի խօստովանութիւնը
պատմելուց յետոյ բայց Փրկչի տուած խիստ
պատասխանից կարելի է գիւրաւ եղանակա-
ցնել թէ ինչ էր նոցա խօսակցութեան
նիւթը: «Ե՛րթ յետս իմ սատանայ» ասում
է նա այն Պետրոսին, որին մի քիչ առաջ
հաստոյ վէմէր անուանել Պետրոս ներկայա-
նում էր ուրեմն այստեղ նոյն փորձութեան
բաժակը ձեռին, որով ներկայացել էր երբեմն
անապատի փորձիցը. «Եթէ Որդի ես Աստուծոյ՝
արկ զքեզ ասաի ի վայր:»

Հեշտութեան, քմահած բաղդին անձ-
նասուր լինելու փորձութիւնն է այդ, ո-
րին ենթարկուելով մարդիկ՝ գատարկ օդի
մէջ գէպի վեր թռչել են ձգտում և թռչ-
ուաւարար անդունդ զլորուում: մինչդեռ
Փրկին այս անգամ ևս փորձութեանը յաղ-
թելով սովորեցնում է չարչարանք և խաչ
յանձն առնելի իւր անձն ուրանալ, մինչեւ
գիրեզման խոնարհել իջնել և այդպէս
միայն գանել այն ուղին, որ յիրաւի գէպի
բարձր, գէպի բարոյական հեշտութիւն և եր-
շանկութիւն է տանում Սակայն որպէս զի
գէպի հողգոթա բացուող այդ մոայլ տեսա-
րանը չիշատեցնէ Պետրոսին և նորա ընկերնե-
րին, որպէս զի նոքա իրենց վարդապետի խո-
նարհութիւնը անկարութիւնն Պիշեայ պսակի
հետ խօստացուած երինային բարիքներն ու-
նայն յուսախարութիւն չհամարեն ու շթե-
րահաւատին՝ Փրկիցը բաց է անում ահա
պայծառակերպութեան սարի վերայ մի ծալքն
այն վարագուրի, որ ծածկում է մահկանացուի
աչքից երինքի սրբութիւնները, և թոյլ է տա-
լիս մի թռուցիկ հայեացք ձգել գէպի այն
աշխարհը, որտեղից նա եկել էր և ուր պէտք
է գնային իւր ծշմարիտ հետեւողները: ի՞նչ
զարմանք, եթէ Պետրոս ցանկութիւն է յայտ-
նում յաւիտեան այդ հայեցողական միծակի
մէջ մնալ, արդար նախահայրերի՝ Մովսիսին և
Նովիայի հետ նոյն տաղաւարի ներքոյ ապրել:

Մեղանից խրաբանցիւրն ունեցել է գուցէ այդպիսի մի ցանկութիւն իւր կեանքի ուրոշ բռպէներում: Կրկին տեսակ են այդ բռպէները և տարբեր բնաւորութիւն ունին այն ցանկութիւնները որ նորա յառաջ են բերում մեր մէջ: Հայկական վարդավակառի տօնը իւր անցեալ և ներկայ նշանակութեամբ, ամփոփում է իւր մէջ այդ բոլորի խորհրդաւոր բացարարութիւնը: Մեր հեթանոս նախնիք վարդավակառին վարդեր էին սփռում հեշտութեան աստուածուհու, վարդամատն Աստղիկի զահոյից առաջ, նորա անունով կատարուած տօնտխմբութիւնների մէջ էին աշխատում մոռանալ աշխարհը, թմբեր վարդերի անոյշ բռւրմունքով՝ հեշտութեան մէջ թաղուել: Քրիստոնեայ հայոց վարդավակառ իւր վսեմ բովանդակութեամբ պայծառակերպել է ձգում մարդկային հոգու այն գաղանի միտումները, որոնք այդպիսի մեզկ հրապյրների ենթարկուելով քայլ առ քայլ դէպի բարոյական անկումն են տանում: Փոխանակ զգայութիւններ և մարմնական ցանկութիւններ խատղեցնող ցնորդների, նաև ընծայումէ մեզ լուսեղէն խորհուրդների մի աշխարհ, որ ամենապայծառ և սուրբ զգացումներով լիցնումէ մեր սիրաը, յափշտակում գրաւում մեր ամրողջ էռութիւնը՝ մինչև մենք մոռանումենք մարմնականն ու երկրաւորը, իրբեւ մի պարզ հոգի երկնայինների մօտ սաւառնում:

Քանի դեռ մենք այս աշխարհումն ենք սպրում քանի մեզ վերայ ծանրանումէ դեռ մարմնոյ կապանքը՝ կեանքի որոշ բռպէներում միայն այսպիսի երանաւէտ վիճակի մէջ գտնուել կարող ենք, մի թեթև ձաշակ առնել նորա քաղցրութիւնից. և ամէն ծշմարիտ քրիստոնեայ պէտք է այսպիսի մի վիճակի մէջ եղած, այդ քաղցրութեան ձաշակն առած լինի. իսկ ով մի անգամ այդպիսի վիճակ ունեցել է, նա կրացականչէր անշուշտ գետրոս առաքեալի հետ, «բարւոք է մեզ ասա լինել», աւելի լաւ կհամարէր, Փօղոս առաքեալի նման, «ցանկալ, ելանել և ընդ քրիստոսի լինել»: Բայց և իրբեւ քրիստոնեայ մենք զիտենք ու

սովորում ենք նոյն Փօղոս առաքեալից, թէ վալ մնալ աստէն ի մարմնի կարևոր ևս է, Յանկարծակի, մէկ անգամից հրաշքով լեռներ զլորել գետեր կանգնեցնել ծովեր ցամաքեցնել գուցէ կարելի է, բայց սովորական հասարակ մարդուն բարոյական բարձր անձնաւորութիւն գարձնել չի կարելի. դորա համար երկարատե տոկուն մաքաւումն պէտք է աշխարհի հետ, մարմնական ցանկութիւնների հետ՝ այրուել ու ամրանալ պէտք է կեանքի բօվում: Վարդերով զարդարուած հարթ ծանապարհը դէպի թմբութեան ու վհատութեան գիրին է տանում: փուշ ու տատասկի մէջ մազցելով միայն կարող է բարոյական մարդը դէպի պայծառակերպութեան սորն ի վեր բարձրանալ, որտեղից զուարժ, հոգեպարար տեսարան է բացուում դէպի հեռու, յափտենական երանութեան գաւառները: Մովսէս և Եղիա մեզ մօտ, մեր երկարոր տաղաւարների ներքյ երկար չեն մնայ, ինչպէս չմնացին Պետրոսի և նորա ընկերների մօտ. բայց Յիսուս, մեր Փրկիչը միշտ մեզ հետ է և թելազրումէ: մեզ անդադար ։ Եթէ ոք կամի գալ զինի իմ ուրացի զանձն իւր և բարձրի զիսաչ իւր, և եկեսցէ զինի իմ: Զի որ կամիցի ապրեցուցանել զանձն իւր՝ կորուսցէ զնաւ, և որ կոռուսցէ զանձն իւր վասն աւետարանին՝ ապրեցուսցէ զնաւ:

Դ. Ա.

